# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-15-2-15/12 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2015թ-ի դեկտեմբերի 29-ին կնքված ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-15-2-15/12-2 ծածկագրով գնման պայմանագրում 2016թ-ի փետրվարի 5-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ապրանքների մատակարարումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով 05.02.2016թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 117:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Համաձայնագիր-1**
**29.12.15թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-15-2-15/12-2 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

**ք. Երևան** «05» փետրվարի 2016թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Կ.Թամազյանի մի կողմից, և «ԷՐՈԴԱՎ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս ընկերության տնօրեն Վ.Մարգարյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 29.12.15թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-15-2-15/12-2 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 9.4-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1.Պայմանագրի 9.2 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Սահմանել, որ Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2016 թվականի դեկտեմբերի 25-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| **Գնորդ** | **Վաճառող** |
| --- | --- |
| ՀՀ ֆինանսների նախարարություն | «ԷՐՈԴԱՎ» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ.Ադամյան-1 | ք. Երևան, Նոր Նորք, Բանավան 11/4 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ |
| Հ/Հ 900013202016, 900013574018 | Հ/Հ 1510021268750100 |
| ՀՎՀՀ 02629081 | ՀՎՀՀ 00885415 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝ | «ԷՐՈԴԱՎ» ՍՊԸ-ի տնօրեն՝ |
| **Կ.Թամազյան** | **Վ.Մարգարյան** |
| ___________________ (ստորագրություն) | ___________________ (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
Հաստատված է
«29» դեկտեմբերի 2015թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-15-2-15/12-2
գնման պայմանագրի փոփոխությամբ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ՀՀ ՖՆ արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 2 | Բարձր լարման ապահովիչներ ПКТ-6 | 5129 | 41 400 | 41 400 | 41 400 | 41 400 | 41 400 | 41 400 | 41 400 | 41 400 | 41 400 | 41 400 | 41 400 | 41 400 |
| 3 | Պարպիչներ РВО-6 | 5129 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 |

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Գնորդ**
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ.Ադամյան-1
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02629081
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավարի
ժամանակավոր պաշտոնակատար՝
**Կ.Թամազյան**
_______________
(ստորագրություն)
Կ.Տ

**Վաճառող**
«ԷՐՈԴԱՎ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք, Բանավան 11/4
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1510021268750100
ՀՎՀՀ 00885415
«ԷՐՈԴԱՎ» ՍՊԸ-ի տնօրեն՝
**Վ.Մարգարյան**
_______________
(ստորագրություն)
Կ.Տ